



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպանձել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

368.4(47)

Վ - 63

Ա. ՎԻՇՆԵՎԵՑԿԻՅ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Ս. ԺԱՄԱՆԱԿԻ ԻՎԱՅՐԱԲԱՑՆԵՐԻ յեզ իրենց կերակրողներից գրկած աշխատավորների ընտանիքների ապահովության մասին Ս. Խ. Հ. Միության մեջ գոյուրյուն ունեցող ուժենքների վերաբերյալ հանրամասչելի բացառություններ

Թարգմ. Ս Ս Բ Ա Տ Ա .

300

2562-Վ-1

Համ. Հ. Օ. Մ. Խորհրդի յեզ Սոցալ Գարչության

Է 20

Յերեվան—1925

3684(7)

Ա. ՎԻՇՆԵՎՑՎԻՅ

MAR 2010

Հ-63

300 Վ

2562-Կ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

1003/
24/1

Աշխատանքի հաշմանդամների և իրենց կերակրողներից գրկված աշխատավորների ընտանիքների ապահովության մասին Ս.Խ.Հ. Միության մեջ գոյությունը ունեցող որենքների վերաբերյալ հանդամատչելի բացարձունքներ

Թարգմ. ՍՄԲԱՏ Ա.

Հրատ. Հ. Ա. Մ. Խորհրդի յեկ Սոցապվարչության

12 AUG 2013

44.178

19 MAR 2010

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Ե ԽՈՍՎՈՒՄ ԸՅՍ ԳՐՔՈՒՅՑԿՈՒՄ

Քանի դեռ չի հաստատված կոմունիստական իրավակարգը, քանի դեռ գոյություն ունին կապիտալիզմն ու նրա մնացորդները, գոյության ընդհանուր կավի մեջ բանվոր մարդը՝ պրոլետարը հույսը պետք է գնի իր սեփական աշխատող ձեռքերի վրա։ Դրանցով ե նա կերակրվում, հագնում և հնարավորություն տալիս իր յերեխաներին մեծանալու։

Բավական ե բանվոր մարդը թեկուզ ժամանակավորապես, յուր աշխատանքի ընդունակությունը—աշխատունակությունը կորցնի, վոր գրանով խորտակի և իր բարեկեցությունը։ Յեթե այդ անաշխատունակությունը նա հիվանդության պատճառով ժամանակավորապես ե կորցնում և միայն վորոշ ժամանակով ե դադարում աշխատելուց, ստեղծված դրությունն ելի մի կերպ տանելի յել լինում։ Բայց շատ վատ վիճակ ե ստեղծվում այն ժամանակ, յերբ աշխատունակությունն ընդ միշտ կորցնում, այսինքն՝ յերբ պրոլետարը դառնում ե հաւմանելու։ Միևնույն ժամանակ դժվարությամբ չե, վոր հաշմանդամ են դառնում։ ծանր հիվանդությունը, ինչպես որինակ տիֆը, շատ անգամ մարդուս մինչև հաշմանդության ե հացցնում։ խեղությունից (սախատ), գործարանում առաջացած դժբախտ գեպքից, որինակ շոգեկաթսայի պայթելուց կամ այլ նման գեպքերից նույնպես հաշմանդամություն ե առաջանում։ հենց ծերության հասնել՝ նշանակում ե հաշմանդամ դառնալ։

Վոչ մեկի համար դա այնպես ծանր չե, ինչպես հաշմանդամի համար, վորոն իր աշխատավորական, ինքնուրույն կյանքից հետո ստիպված ելինում դառնալ ավելորդ բերան ու շրջապատողների համար բեռ, յեթե նման վիճակով, բացառություն չընդունենք իրենց նեցուկին կորցրած ու վորբացած աշխատավորների ընտանիքներին անդամ:

Իրենց հայրերին ու ամուսիններին կորցրած վորբերն ու ամուսինները և իրենց զավակներից զբարկված հայրերն ու մայրերն են, վոր հաշմանդամներին հավասար, միակ կիրակրողի մահով, զրկվում են իրենց կյանքի սովորական ընթացքից. միայն սրանց կարելի յել իրենց գառը վիճակով համեստել հաշմանդամների հետ:

Ո՞ւմ վրա կարող են նրանք իրենց հույսը դնել նման գժրախտությունների ղեպքերում. Առաջներում ստիպված ելին իրենց վրա դնելու հույսը: Յեթե բանվորը մինչև հաշմանդամ դառնալը, կամ ընտանիքի կերակրողը մինչև իր մահը կարողացել ելին մի բան հետ գցել մեր վահամար, թե հաշմանդամը և թե վորբացած ընտանիքը միասում մասնակ փրկվում ելին սովաման լինելուց: Խսկ յեթե չեր հաջողվել նըրանց մի բան հետ գցել այն ժամանակ արդեն, գժրախտությունից անմիջապես հետո նրանք պետք ետուպակներն ուսերն առնելին, վողորմություն հավաքելին:

Այժմ այն չե, ինչ առաջ եր: Խորհրդային իշխանության հրատարակած հատուկ որենքների հիման վրա, ներկայում մեզ մոտ գոյություն ունին այնպիսի հիմնարկներ, վորոնք պարտավոր են ոգնություն ցույց տալ հաշմանդամներին, այրիներին և վորբերին:

Այս հիմնարկները զանազան տեսակի են: Սրան-

ցից մի քանիսը, վորոնք ոգնություն են ցույց տալիս պատերազմում իրենց առողջությունը կորցրած հաշմանդամներին և այն վորբացած ընտանիքներին, վորոնք իրենց կերակրողներին կորցրել են պատերազմի դաշտում, կոչվում են սոցիալական ասպահովության բաժիններ, կամ այլ կերպ ասած՝ Մյուսները, վորոնք ոգնություն են ցույց տալիս հիվանդության, խեղության (սախատ), ծերության հետևանքով, և ընդհանրապես կյանքի խաղաղ պայմաններում իրենց առողջությունը կորցրած հաշմանդամներին (աշխատանքի հաշմանդամներ), և այն վորբացած ընտանիքներին, վորոնք նույնպես, իրենց կերակրողներին կորցրել են կյանքի խաղաղ պայմաններում՝ կոչվում են ասպահովագրական գանձարկներ:

Հենց վրա մասին ել խոսվում է այս գրքույկում թե ինչպես և ինչպէ են ապահովագրական գանձարկուները ոգնության հասնում աշխատանքի հաշմանդամներին և այն վորբացած ընտանիքներին, վորոնք կորցրել են իրենց կերակրողներին:

ԽՆՉ ԲԱՆ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՉԱՐԿՂՋ

Ապահովագրական գանձարկը մի այնպիսի հիմնարկություն է, վորը ապահովագրում է բոլոր վարձու աշխատանք կատարողներին՝ հիվանդության, անգործության, հաշմանդամության, ընտանիքի կերակրողի մահման և այլ զանազան կարիքների գեպքերում ոգնություն ցույց տալու համար: Դրամարկղի գործերը վարում ե կոմիտեն, վորը ընտրվում է կես կամ մեկ տարով պրոֆմիկության համագումարում, կամ այլ կերպ ասած՝ գործարանային կոմիտեների ու այլ արդյունաբերական ձեռնարկությունների ու հիմ-

նարկների աշխատավորների ներկայացուցիչների ժողովներում:

Կոմիտեն աշխատում ե բանվորական պրոֆմիությունների և վերստուգիչ հանձնաժողովի հսկողության տակ. վերջինս նույնպես ընտրվում ե պրոֆմիության համագումարում: Այսպիսով ապահովագրական գանձարկների աշխատանքները տարվում են իրենց, բանվորների ու ծառայողների ամենամոտ մասնակցությամբ ու հսկողության տակ:

Ապահովագրական գանձարկը ոգնություն ցույց տալիս ապահովագրվածներին, բաց թողնելով զանազան տեսակ նպաստներ ու թոշակ այն միջոցներից, վոր նա զանձում ե ձեռնարկություններից ու հիմնարկներից: Ձեռնարկություններն ու հիմնարկները պարտավոր են ապահովագրական մուծումները վճարել բացառապես իրենց միջոցներից և իրավունք չունին սոցիալական ապահովագրության հոմար բանվորների ու ծառայողների ոռնիկներից հետ պահել:

ԱՊԱՀՈՎԱԳՐԸԿԱՆ ԳԱՆՉՅԱԿՂԸ Ի՞ՆՉՊԻՍԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ Ե ԱՊԱՀՈՎՈՒՄ

Մենք սրդեն գիտենք, վոր ապահովագրական գանձարկը ողնություն ե ցույց տալիս միայն աշխատանքի հաշմանդամներին, այսինքն այն հաշմանդամներին, վորոնք իրենց աշխատունակությունը կորցըրել են դժբախտ գետքերի հետևանքով—հիվանդությունից կամ ծերությունից՝ վարձու աշխատանքի ընթացքում: Սական ծերության հետևանքով իրենց աշխատունակությունը կորցրած բոլոր հաշմանդամներին ել ապահովագրական գանձարկը չի նպաստում, այլ միայն նրանց, վորոնք մինչև հաշմանդամության

հաստատվելն արդեն վոչ պակաս, քան ութ տարի վարձով են աշխատել մեկ, կամ այլ զանազան ձեռնարկություններում ու հիմնարկներում:

Ծերերից որենքով աշխատանքի ստաժ ե պահանջվում այն պատճառով, վոր նրանց մեջ կաշատ այնպիսիները, վորոնք մինչև խորհրդային իշխանությունը բոլորովին աշխատանք չեն կատարել, կամ յեթե աշխատել են, դա յեղել ե իրենց սեփական արհեստանոցներում, խանութներում և այլն: Վորպեսզի այդ առաջվա անգործներն ու մանր ու միջակ գործատերերը, վորոնք միաժամանակ ձգտում են անցնել դառնալու խոշոր բուրժուաներ, այժմ չթափեն ապահովագրական գանձարկները և իրենց համար ապահովություն պահանջեն՝ մատնանշելով իրենց ծերության անկարողությունը: Ահա թե ինչու յե որենքով պահանջվում, վորպեսզի ծերության հետևանքով հաշմանդամ դարձաներին ապացուցեն իրենց 8-ամյա աշխատանքի ստաժը:

Իսկական բանվորի և ծառայողի համար, վորոնք ծերության են հասել և ծերության անկարողությամբ կորցրել աշխատունակությունը, այս ստաժի պահանջը վոչ մի նշանակություն չունի: Նրանք միշտ ել շատ հեշտությամբ կարող են ապացուցել, վոր իրենց ամբողջ կյանքում աշխատել են: Յեթե այսպիսի բանվորը կամ ծառայողը վորեւ պատճառով իր վարձու աշխատանքի վերաբերյալ վոչ մի փաստաթուղթ չի պահել նա կարող ե իր աշխատանքի ստաժն ապացուցել այլ ճանապարհով: Դրա համար նա պետք ե դիմի Ժողովրդական Դատարանին, իր աշխատանքի ստաժը հաստատելու ցույց տալով վերտեղ, յերբ, ինչքան ժամանակ աշխատել և ովք կարող ե այդ հաստատել: Այն ժամանակ դատարանը կկանչի վկաներին և յեթե վերջիններս հաստատեն դիմումը, նրան վկայական կտտ

աշխատանքի ստաժի մասին, և դա ապահովագրական գանձարկղի համար կունենա նույնպիսի ուժ, ինչպիսին աշխատանքի կամ ծառայության տեղից արգած վկայականը:

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԸ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ 6 ԽՄԲԻ

Ապահովագրական գանձարկղը բոլոր հաշմանդամներին միանման ոգնություն չի ցույց տալիս: Մի քանի ցույց և տալիս մի տեսակ ոգնություն, ուրիշներին այլ, յերբորդներին՝ բոլորվին ոգնություն չի ցույց տալիս: Այս գլխավորապես կախված են նրանից, թե այս կամ այն հաշմանդամը վճրքան և կորցրել էր աշխատանքի ընդունակությունը:

Հստ իրենց աշխատանքի ընդունակության կորցնելու աստիճանի, հաշմանդամները խորհրդային որենքներով բաժանվում են 6 կարգի, կամ այլ կերպ ասած՝ 6 խմբի: Յեթև մեկը կորցրել և իր աշխատանքի ամբողջ ընդունակությունը և բացի այդ, կարիք և զգում նաև կողմնակի ոգնության՝ ուտելու, խմելու, հագնելու և այլն, այդպիսին համարվում են 1-ին խմբի համարանդամներամբ:

Յեթև մեկը, ինչպիսի աշխատանքի համար ել լինի, կորցրել և իր ամբողջ ընդունակությունը, բայց դեռ կարող և առանց կողմնակի ոգնության ուտել խմել, հագնել և այլն, այդպիսին համարվում են 2-րդ խմբի համարանդամներամբ:

Յեթև մեկն արգեն իր նախկին աշխատանքով բոլորվին հնարավորություն չունի պարապելու, այլ միայն դժվարությամբ կարող և զբաղվել վորեն: այլ թեթև աշխատանքով, այն ել վոչ տեսական, այլ թեթե-

վակի—վորքան առողջությունը թույլ կտա, այդպիսին արդեն հաշվում են 3-րդ խմբի համարանդամներին:

Յեթև մեկն յուր նախկին աշխատանքով արդեն բոլորվին չի կարող պարապել, բայց կարող և ուրիշ մշտական ու ափելի քիչ վարձատրվող աշխատանք կատարել՝ այդպիսին համարվում են 4-րդ խմբի համարանդամներամբ:

Յեթև մեկն յուր հին աշխատանքից ստիպված և հրաժարվել, բայց քիչ թե շատ հարմարություն ունի անցնելու այլ մշտական աշխատանքի—վորը վարձատրվում են հնից վոչ պակաս, այդպիսին համարվում են 5-րդ խմբի համարանդամներամբ:

Յեթև մեկը հաշմանդամ լինելով, կարող և իր հին աշխատանքով պարապել, բայց մի փոքր ափելի քիչ վարձատրությամբ (ափելի ցածր արտադրողականության հետևանքով), այդպիսին համարվում են 6-րդ խմբի համարանդամներամբ:

ԱՎՔԻԵ՞Ր ԵՆ ՎՈՐՈՇՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐՅԱՆ ՎՈՐ ԽՄԲԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԸ

Թե վորքան և մարդ կորցրել իր աշխատանքի ընդունակությունը, այսինքն հաշմանդամության վճր խմբին և պատկանում վորոշվում և հատուկ հանձնաժողովում, վոր կոչվում է ենապերտային (մասնագիտական):

Հաշմանդամին այս կամ այն խմբի մեջ անցկացնելու համար եքսպերտ հանձնաժողովը պետք է վոչ միայն վորոշի, թե ինչով և հիվանդ հաշմանդամը, այլ նաև այն, թե նա իր հիվանդությամբ հանդերձ ինչ աշխատանքի յե դեռ ևս ընդունակ: Հասկանալի յե, վոր միայն բժիշկները—չեն կարող անել այդ:

Բժիշկները լավ են հասկանում ամեն հիվանդություն, բայց հաճախ նրանք տեղեկություն չունեն այն աշխատանքների մասին, վորոնք կատարվում են գործարանում կամ արհեստանոցում և, ինչ պահանջ ե դրվում բանվորին, վոր նա, ըստ իր մասնագիտության ինչպես հարկն ե այդ աշխատանքը կատարի: Դրա համար եքսպերտ հանձնաժողովի մեջ մտնում են վոչ միայն բժիշկներ՝ զանազան մասնագիտությամբ, այլ նաև պրոֆիլության ներկայացուցիչներ և մասնագետ տեխնիկներ, վորոնք ի հարկե, բժիշկներից լավ զիտեն, թե մարդու մարմնի վրա անդամներն ու գործարաններն են այս կամ՝ այն մասնագիտական աշխատանքի ժամանակ գործում: Եքսպերտ հանձնաժողովի նախագահն ե պրոֆիլության ներկայացուցիչը: Այս դեպքերում, յերբ քննվում են յերկաթուղային կամ ջրային հաղորդակցության բանվորները, հանձնաժողովում մասնակցություն ե ունենում յերկաթուղային կամ ջրային հաղորդակցության պրոֆիլության ներկայացուցիչը: Բարդ գժվարին գեղքերում, յերբ հանձնաժողովն ինքը չի կարողանում վորոշել, վոր խմբի մեջ հաշվել տվյալ հաշմանդամին, կարող ե ոգնության հրավիրել այլ մասնագետների՝ բժիշկների, ճարտարապետների և այլն:

Հաճախ պատահում ե, վոր եքսպերտ հանձնաժողովի բժիշկները չեն կարողանում անմիջապես վորոշել հիվանդությունը: Այդպիսի դեպքերում հանձնաժողովը հիվանդին ուղղում է հիվանդանոց փորձեր կատարելու կամ քննելու վորեն մասնագիտական բուժական հիմնարկի մեջ, որինակ լուսաթափանցման յենթարկելու և այլն: Պատահում ե նաև այնպես, վոր թեպետ հիվանդությանը հայտնի յե, բայց վորոշել թե հետագայում նա ինչպիսի ազդեցություն կունե-

նա մարդու աշխատունակության վրա՝ եքսպերտ հանձնաժողովը միանդամից չի կարողանում: Այդպիսի դեպքերում հանձնաժողովը նշանակում է կես, մեկ կամ յերկու տարուց հետո վերաքննություն, վորի ժամանակ վերջնականապես վորոշում ե, թե հիվանդին հաշմանդամության վրա խմբի մեջ պետք ե հաշվել:

Եքսպերտ հանձնաժողովներ կան բոլոր գավառական և նախանդական քաղաքներում: Յեթե այն վայրում, վորաեղ ապրում է հաշմանդամը եքսպերտ հանձնաժողով չկա, նա ապահովագրական գանձարկղի կամ կայանի միջոցով ուղարկվում է մոտակա եքսպերտ հանձնաժողովը՝ քննության յենթարկվելու: Այս դեպքում հիվանդը ճանապարհվում է վոչ թե իր հաշվով, այլ ապահովագրական միջոցներով: Յեթե հաշմանդամը թույլ ե, հիվանդ ե, և չի կարողանում ներկայանալ քննության, ապահովագրական գանձարկղը կամ կայանը նրա մոտ, տուն են կանչում եքսպերտ բժիշկին կամ նույնիսկ ամբողջ եքսպերտ հանձնաժողովին:

Եքսպերտ հանձնաժողովը չի քննում բոլոր նրանց, ովքեր ներկայանում են իրենց, այլ միայն նրանց, վորոնք ապահովագրական գանձարկղի կամ նոցապի կողմից են ուղարկված: Դրա համար աշխատանքի ամեն մի հաշմանդամ, յեթե ցանկանում ե, վոր եքսպերտ հանձնաժողովը նրան քննի և անցկացնի այս կամ այն խմբի մեջ, պետք ե նախ և առաջ դիմի ապահովագրական գանձարկղին: Առանց ապահովագրական գանձարկղի առաջարկության, եքսպերտային հանձնաժողովը վոչ վորի քննության չի յենթարկի:

ՈՒՄ ՊԵՏՔ Ե ԲՈՂՈՔԵՆ ԵՔՍՊԵՐՏ ՀԱՆՉՆԱ-
ԺՈՂԱՎԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ ԴԺԳՈՀՆԵՐԸ

Եքսպերտ հանձնաժողովներն իրենց աշխատանք-ներով յենթարկվում են նահանգական առողջապահության բաժնին։ Յեթե աշխատանքի հաշմանդամը եքսպերտ հանձնաժողովի վորոշումից դժգոհ ե, նա կարող է բողոքել այդ բաժնին և խնդրել վերաբներու հանձնաժողովի վճիռն։ Այդպիսի բողոքների քննության համար նահանգական առողջապահական բաժիններին կից գոյություն ունեն հատուկ հանձնաժողովներ, վորոնք բանվորա-կոնֆլիկտային են կոչվում։ Այդ հանձնաժողովները կազմվում են նահանգական պրոֆեսիոնալ միությունների խորհրդի և սոցիալական ազանովության նահանգական բաժնի ներկայացուցիչներից։

Յեթե բանվորա-կոնֆլիկտային հանձնաժողովներում քննված են յերկաթուղարքինների կամ ջրային հաղորդակցության աշխատավորների բողոքները, այդ դեպքում հրավիրվում է նաև հաղորդակցության ապահովագրական գանձարկի ներկայացուցիչը։ Բացի այդ, յեթե պահանջ լինի, հանձնաժողովը կարող է հրավիրել իր կազմի մեջ՝ մասնագետ բժիշկների և տեխնիկների։

Բանվորա-կոնֆլիկտային հանձնաժողովը ստանալով բողոքները՝ իսկույն պահանջում է եքսպերտ հանձնաժողովից գանգատավորի գործը։ Յեթե նրա հարցը փաստաթղթերի հիման վրա պարզ ե, վճիռն ել լինում է համաձայն հանձնաժողովի վորոշման։ Իսկ յեթե յեղած փաստաթղթերով գործի քննությունը դժվարանում է, հաշմանդամը կանչվում է վերաբնության և հարցը վերջնականագես վորոշում ե, թե նը-

րան հաշմանդամության վեր խմբի մեջ պետք է հաշվել։ Նահանգական քաղաք գնալն այս դեպքում ևս կատարվում և ապահովագրական միջոցների հաշվին։

ԻՆՉՊԵ՞Մ ԵՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀԱՇՄԱՆԴԱՎՈՐՄՆԵՐԻՆ

Խորհրդային որենքներով աշխատանքի հաշմանդամներին ոգնություն ե ցույց տրվում վոչ թե նրա համար, վոր նա տուժել ե, ցավ ե քաշել, բուժվել ե, դրկվել ե իր մարմի այս կամ այն գործարանից, այլ նրա համար, վոր նա կորցրել ե աշխատանքի ընդունակությունը և այլևս ապրուստի միջոց չունի։ Ապահովագրական գանձարկղները ոգնություն են ցույց տալիս վոչ բոլոր հաշմանդամներին, այլ միայն նրանց, վորոնք ընունակ չեն մի այնպիսի աշխատանք կատարելու, վորից միշտ աշխատավարձ ստանան. գրանք 1-ին, 2-րդ և 3-րդ խմբին պատկանող հաշմանդամներն են։ Իսկ 4-րդ, 5-րդ և 6-րդ խմբի հաշմանդամները, վորոնք ընդունակ են այնպիսի աշխատանքների, վորեց կարող են աշխատավարձ ստանալ, զրվում են աշխատանքի բորսայում և հնարավորության չափ ուղղակիվում աշխատանքի։

Մինչև աշխատանքի սւլարկվելը նրանք ապահովագրական գանձարկղից ստանում են ոգնություն վոչ վորպես հաշմանդամներ, այլ վորպես գործադուրկներ, —վերջիններիս նպաստի ձևով։ 1-ին, 2-րդ և 3-րդ խմբերի հաշմանդամները, վորոնք երենց աշխատանքի հաշմանդամները, վորոնք երենց աշխատունակությունը սպառել են հիվանդության կամ ծերության հետևանքով և շնորհիվ իրենց նախկին վարձու աշխատանքի այժմ իրավունք ունին գանձարկղից ապահովություն ստանալու՝ այդ ոգնու-

թյունը տրվում ե նրանց թոշակի ձևով: Վերջինս նըշանակվում ե մեծ չափով՝ 1-ին խմբի հաշմանդամների համար, մի փոքր պակաս՝ 2-րդ խմբի հաշմանդամների համար և ավելի քիչ՝ 3-րդ խմբի համար: Ներկայումս 1-ին խմբի հաշմանդամների համար, վորոնք աշխատունակությունը կորցրել են հիվանդության կամ ծերության հետևանքով, թոշակի չափը հաստատված է 14—18 ռուբլի, 2-րդ խմբի հաշմանդամների՝ դրա 2/3 մասը, այսինքն մոտ 9—12 ռուբլի, 3-րդ խմբի հաշմանդամներին՝ նպաստի կեսը (վոր տրվում է 1-ին խմբին), այսինքն 7—9 ռուբլի:

Թոշակի չափը վորոշելիս շիտմամբ նշանակված են մեծ ու փոքր գումարներ, վորոնց սահմաններում թոշակի կայուն չափը վորոշում է Սոցապի նախագահական վարչությունը կամ ապահովագրական գանձարկը՝ վորովհետև թանգությունը բոլոր տեղերում միենույն չե: Բայց և այնպես ապահովագրական գանձարկըներն իրավունք չունեն առանց Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատին կից Սոցապի գլխավոր վարչության հատուկ թույլատվության, 14 ռուբլուց պակաս տալու 1-ին խմբի հաշմանդամներին, 9 ռուբլուց պակաս՝ 2-րդ խմբի և 7 ռուբլուց պակաս՝ 3-րդ խմբի հաշմանդամներին:

ԽԵՂՎԱՃ ՀՇՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԱՌԱՆՉԱՑՎՈՒԺ ԵՆ ՑԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԻ ՄԵԶ

Մեր պետական իշխանությունը շատ լավ է հառկանում, վոր ապահովագրական գանձարկիներից տըրված այդ թոշակով գժվար և ապրել: Դրա համար ել նա ամեն կերպ աշխատում է թոշակի չափը մեծացնել դժբախտաբար միջոցների քչության պատճառով նպաս-

տի չափը հնարավոր ե շատացնել քիչ-քիչ և աստիճանաբար: Վերջին ժամանակներս սկսել են թոշակի չափը մեծացնել այն հաշմանդամների համար, վորոնք իրենց աշխատունակությունը կորցրել են խեղությունից, վարձու աշխատանքի հետ կապված վարելեզուն կատարելու ժամանակակից Այդ խեղված (սախատ) հաշմանդամների հատուկ կարգի մեջ մտնում են նրանք, վորոնք վորեւ դեպքից անսպասելի կերպով տուժել են՝ հետեւյալ հանգամանքներում.

1) Իրենց ծառայության պարտականությունները կատարելիս: Որինակ՝ հանկարծ աշխատանքի ժամանակ բանվորի վորոշը կամ ձեռքը ընկնում ե մեքենայի տակ:

2) Զեռնարկության վերատեսչի, տիրոջ կամ վարպետի հանձնարարությունները կատարելիս: Որինակ՝ բանվորին պատվիրած ե վորեւ աշխատանք և այդ ժամանակ նրա հետ դժբախտություն ե պատահում:

3) Զեռնարկության կամ նրա տիրոջ ոպտին վորեւ աշխատանք կատարելիս, թեկուզ տերը կամ կառավարիչը նրան չեն ել առաջարկել այդ անելու: Որինակ, բանվորն ինքն և նետվել ձեռնարկության պահեստում առաջացած հրդեհը հանգցնելու՝ վոչ իր աշխատանքի ժամերին:

4) Այն տեղում, վորտեղ գտնվում է ձեռնարկությունը, կամ աշխատանքներն են տարվում, նախաճաշի, մեքենան մաքրելու, հագուստը փոխելու և այլ կարիքների համար յեղած ընդմիջումների ժամանակ: Որինակ աշխատավորը յեկել ե զործարան և բանվորական հագուստը հագնելիս, մարմնի վորեւ մասը ընկնում մեքենայի տակ:

5) Զեռնարկության կամ աշխատանքի տեղին

մոտ, բանվորական որվա ընթացքում՝ յեթե ըստ ներքին կանոնադրության արգելված չեն նրան այդ տեղում լինել: Որինակ, բանվորը թողնելով աշխատանքը, ընական կարիքի համար գնացել եւ դուրս, վոր գտնը-վում ե մի փոքր հեռու. և նույն ժամին վնասվել ե, ասենք թե գնդակից: Բայց այլ ե, յեթե նույն բան-վորը վնասվում ե այն ժամանակ, յերբ աշխատանքը թողնելով վազում ե տեսնելու նվազախմբով անցնող շքերթը. նա այդ կարգի մեջ չի կարող մտնել, վորով-հետեւ այս գեղքերում նա խախտում ե ներքին կանո-նադրությունը:

6) Ճանապարհին, տնից աշխատանքի գնալու ժամանակ, կամ աշխատանքից տուն վերադառնալիս: Որինակ, նման գեղքերում հանկարծ ընկնում ե եւ-լենարաքարշի (տրամվայի) տակ:

Այն հաշմանդամները, վորոնք աշխատունակու-թյունը կորցրել են վերը ճիշված հանդամանքներում տեղի ունեցած դժբախտ գեղքերից, ինչպես արդեն ասվեց, այժմ առանձնացված են և ստանում են ավելի մեծ թոշակ, քան մյուս հաշմանդամները¹⁾: Այդ կարգի հաշմանդամների համար թոշակի չափը վորով-վում ե համաձայն նրանց միջին հիմնական աշխատա-վարձի, վորը նրանց տրվել ե մինչև աշխատունակու-թյան կորցնելը: Այսպիսով 1-ին խմբի խեղված-հաշ-մանդամներին նպաստ ե արվում միջին աշխատավար-ձի լրիվ չափով, 2-րդ խմբի խեղված-հաշմանդամներին

¹⁾ Այն հաշմանդամները, վորոնք աշխատունա-կությունը կորցրել են խեղությունից այն ժամանակ, յերբ նրանք որենքով պատժվող հանցագործություն են արել իրավունք չունեն ոգտվելու խեղածների համար սահմանված ապահովությունից:

միջին աշխատավարձի լրիվ չափի $\frac{3}{4}$ մասը, 3-րդ խմ-բի խեղված-հաշմանդամներին՝ միջին աշխատավարձի կեսը:

Ուրեմն, խեղված-հաշմանդամի թոշակի չափը վո-րոշելու համար, ամենից առաջ պետք ե իմանալ նրա միջին հիմնական աշխատավարձը՝ վորպիսին նա ստա-ցել ե մինչև աշխատունակության կորցնելը: Սակայն այդ միշտ հեշտ չե անել, այնպես վոր ճին հաշման-դամները համարյա միշտ ել չեն ունենում հարկավոր փաստաթղթեր, վորոնցով կարելի լիներ նրանց աշ-խատավարձը վորոշել: Այս տեսակետից խեղված-հաշ-մանդամները բաժանվում են յերկու կարգի: Առաջին կարգի մեջ են մանում նրանք, վորոնք դժբախտ գեղքից վնասվել են մինչև 1924 թ. հունվարի 1-ը: Արանց թոշակ ե նշանակվում այնքան, վորքան նույն վորակի (հմտության, մասնագիտության) այլ բանվորի վերջին յերեք ամսվա (մինչև թոշակ նշանակելը) միջին աշխատավարձն ե կազմում:

Եերկրորդ կարգի մեջ են մանում նրանք, վորոնք դժբախտ գեղքից վնասվել են 1924 թ. հունվարի 1-ից հետո: Այս գեղքում թոշակ ե նշանակվում այնքան, վորքան հետեւ իր վնասված բանվորի վերջին յերեք ամ-սվիլա միջին աշխատավարձն ե անսամ:

Վերցնենք այսպիսի որինակ, նախկին փականա-գործը այժմ հաշմանդամ Խնկոյանի համար պետք ե վորոշել թոշակի չափը, վորը վնասվել ե դժբախտ գեղքից մինչև 1924 թ. հունվարի 1-ը: Այս գեղքում պետք ե վոչ թե Խնկոյանի միջին աշխատավարձը ի-մանալ, այլ նույն վորակի այլ բանվորի՝ ինչպիսին ինքն ե, բացի այդ, վոչ թե մինչև դժբախտ գեղքի 3 ամսվա միջին աշխատավարձը պետք ե վերցնել, այլ մինչև Խնկոյանին թոշակ նշանակելը: Ասենք այդ

բանվորը մի ամսում աշխատավարձ և ստացել 30 ռուբլի, մյուս ամսում՝ 40 ռուբլի, իսկ յերրորդում՝ 50 ռուբլի. ուրեմն այդ յերեք ամսում նա ստացել է ընդամենը 120 ռ. այսպիսով բանվորի ամսական միջին աշխատավարձը գտնելու համար պետք է 120 ռուբլին բաժանել յերեք ամսի վրա, զոր կազմում է 40 ռուբլի: Այդ 40 ռուբլին ել կարվի Խնկոյանին վորպես թոշակ յեթե նա 1-ին խմբի հաշմանդամ է. յեթե 2-րդ խմբի հաշմանդամ է, այդ 40 ռուբլու 3/4 մասը, զոր անում է 30 ռուբլի. իսկ յեթե 3-րդ խմբի հաշմանդամ լիներ, այդ 40 ռուբլու կեսը, այսինքն՝ 20 ռուբլի: Նույն վորպակի բանվորի միջին աշխատավարձի մասին տեղեկություններ պետք է ստանալ այն պրոֆմիությունից, վորին անդամ է Խնկոյանը, կամ պետք է լիներ՝ ըստ իր աշխատանքի:

Բայց յենթադրենք Խնկոյանը ֆասվել է վոչ թե մինչև 1924 թ. հունվարի 1-ը, այլ դրանից հետո: Այս դեպքում պետք է իմանալ վճրքան և ստացել ինքը Խնկոյանը վերջին յերեք ամսում մինչև դըքախտ դեպքը, և, դրա միջին աշխատավարձը պետք է ընդունել վորպես հիմք նրան թոշակ նշանակելիս: Յենթադրենք Խնկոյանի վերջին յերեք ամսվա աշխատավարձի միջին ամսականը կազմում է 44 ռուբլի: Այս հիման վրա յել պետք է տալ նրան թոշակ 44 ռուբլի, յեթե 1-ին խմբի հաշմանդամ է. այդ գումարի 3/4-ի չափ, այսինքն 33 ռուբլի՝ յեթե նա 2-րդ խմբի հաշմանդամ է և նույն գումարի կեսը՝ 22 ռուբլի, յեթե 3-րդ խմբի հաշմանդամ է:

Յեթե հաշմանդամի աշխատավարձը մինչև աշխատունակության սպառելը շատ ցածր է յեղել և դրա համեմատ ել նրան հասանելիք թոշակն ավելի քիչ է, քան այդ ստանում են նիվանդությունից ու ծե-

րուբյունից հաշմանդամ դարձածները, այդ դեպքում նրան ել թոշակ ե նշանակվում այնքան, վորքան այդ հաշմանդամներն են ստանում. այսպիսով նրան տըր-գում ե ավելի բարձր ու ձենտու թոշակ:

ԵԼԻ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՄԱՆԴԱՅՆԵՐԸ

Պատահում է նաև, զոր հաշմանդամին վոչ մի տևսակ թոշակ չի ոգնում: Կինելով անապաստան (անտուն), մենակ ու անխնամ, նա պատրաստ է տալու իր ամքողջ թոշակը, միայն թե ունենա վորեւ անկյուն, վորտեղ մեկը լինի իրեն մասին հոգ տանող ոգնի նրան ուտելու, խմելու, հագնելու և հիվանդության ժամանակ: Քիչ չեն նման հաշմանդամներ մանավանդ իրենց գարն անցկացրած ծերունիների մեջ: Այս գործում նման հաշմանդամներին ոգնելու հանար ապահովագրական գանձարկղները Սոցիալական Ապահովության (Սոցալ) բաժինների հետ պայմանագիր են կնքում, զորով Սոցավները պարտավորվում են նրանց ընդունելու իրենց հաշմանդամության տներում և աշխատանքի հաշմանդամների ապաստարաններում, լրիվ ինամաքով. իսկ ապահովագրական գանձարկղները պարտավորվում են գրա փոխարեն Սոցավներին գնարել նրանց թոշակները: Այսպիսով ամեն մի անապաստան, մենակ ու անխնամ աշխատանքի հաշմանդամ կարող է թոշակ ստանալու փոխարեն, յեթե նա այդ ցանկանում է, Սոցալի հաշմանդամության տունն ընդունվել:

Պատահում է նաև, զոր յերթասարդ ու վոչ շատ ծեր հաշմանդամներից շատերն ավելի ուրախ են թողնելու թոշակը, միայն թե նրանց հնարավորու-

Թյուն տրվի վորեև նոր աշխատանքի կպչել ու նոր մասնագիտության վարժվել վորպեսզի իրենց սեփական աշխատանքով ապրեն: Նման հաշմանդամներին այս գործում ոգնելու համար Սոցիալական ապահովագրության զլիսավոր վարչությունը պայմանագիր և կնքել վորով Սոցիալական Ապահովության ֆողովը դական Կոմիտարիատը պարտավորվում և ընդունել նրանց իր տեխնիկումները, աշխատանքի հաշմանդամների կրթական պրոֆեսիոնալ արհեստանոցները, իսկ Սոցապահովագրությունը պարտավորվում և դրա համար Սոցապին վճարելու նրանց թոշակները և ուսուցման վարձատրությունը: Այսպիսով նոր մասնագիտության ընդունակ ամեն մի հաշմանդամ, յեթե նացանկանում և, թոշակ ստունալու փոխարեն կարող և ուղարկել Սոցապժողկումատի տեխնիկումը սովորելու:

Վերջին ժամանակներում Սոցապին պատերազմի հաշմանդամներին սկսեցին կազմակերպել արտադրողական և առևտրական կոռպերատիվների արտելների աշխատանքների համար: Հաշմանդամների նահանգական միացյալ կոռպերատիվների զեկավարությամբ, Սոցապներին կից կազմակերպվում են թիթեղագործների, կոշկակարների, ատախծագործների արհեստանոցներ, գարեջրատներ, թեյատներ և նման հիմնարկություններ: Այդ ձեռնարկությունների կազմակերպման համար հաշմանդամները հատկացնում են իրենց մի քանի ամսվա ստանալիք թոշակները, վորտեղ և մասնակցում են իրենց անձնական աշխատանքով: Հասկանալի յե, վոր այդ աշխատանքով կարող են զրազվել նաև աշխատանքի հաշմանդամները: Սրանցից ամեն մեկը, յեթե ցանկանում է մտնել այդպիսի արտելի մեջ, կարող և ամեն ժամանակ յերեք չորս ամսվա համար առաջուց ստանալ իր թոշակը, իր ըտ-

ժինը մտցնել արտելի մեջ և սեփական աշխատանքով ձեռք բերել իր գոյության համար միջոցներ: Յեթե հաշմանդամների այդ կազմակերպած ձեռնարկությունը վորեւ պատճառով կքայքայվի, յենթադրենք, կայրով, այն ժամանակ հաշմանդամը նորից կարող և դիմել ապահովագրական գանձարկոին, վորը արդեն բաց թողած գումարի ժամանակ լրանալուց հետո, նորից կվճարի նրան հասանելիք թոշակը:

ԺՈՇԱԿԱԽՎԻ ԱԳՐՈԽԾԻ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԵԱՌՈԽԾԻ

Մենք արդեն վերևում ասացինք, վոր ապահովագրական գանձարկը ոգնություն և ցույց տալիս աշխատանքի այն հաշմանդամներին, վորոնք ապրուատի միջոցներից զուրկ են: Դրա համար նախ քան աշխատանքի հաշմանդամին թոշակ նշանակելը, ապահովագրական գանձարկը հաշվի և առնում նրա ապրուատի միջոցները: Այնպիս վոր, յեթե հաշմանդամը այնպիսի աշխատանք կամ յեկամուտ ունի, վորը ուրինքով նրան հասնելիք թոշակի հետ միասին վերացրած ավելի շատ և ստացվում, քան նույն վայրում ապրող մի այլ բանվորի միջին աշխատավարձն և կազմում, այդ գեղքում նրա թոշակը պակասեցվում է:

Որինակ 1-ին խմբի հաշմանդամ Գասպարյանը վորեւ յեկամուտ ունի, վորը հավասար և ամսական 4 ոուրլու նրան թոշակ և հասնում, ըստ 1-ին խմբի՝ 14 ոուրլու չափ, իսկ նույն վայրում ապրող բանվորի միջին աշխատավարձը, հավասար և 16 ոուրլու Այս գեղքում Գասպարյանը վոչ թե 14 ոուրլի յետանում, այլ 12 և, վորովհետեւ նրա 4 ոուրլի յեկա-

մուտը 14 ոռւրլի թոշակի հետ կազմում ե 18 ոռւրլի, վորը ավելի յե, քան նույն վայրում ապրող բանվորի միջին աշխատավարձը, այսինքն՝ 16 ոռւրլին:

Այստեղ արժե լրացնել վոր նրա մասնավոր յեկամուտը հաշվառման յենթարկելիս, նկատի յե առնվում միայն իր, հաշմանդամի աշխատածն ու յեկամուտը: Ինչ վերաբերվում ե ընտանիքի մյուս անդամների աշխատավարձին ու յեկամուտներին, այդ արդեն հաշվառման ժամանակ նկատի չի առնվում: Որինակ Գասպարյանը ընտանիքում ունի աշխատող քույր կամ յեղայր, սրանց աշխատավարձը չի հաշվում, այլ միայն իր՝ Գասպարյանի աշխատանքն ու յեկամուտը: Յեթե աշխատանքի հաշմանդամն ունի իր արհեստը և ոգտվում է նաև ուրիշի վարձու աշխատանքից, կամ, պարապում առետրով, այդ դեպքում թոշակ բոլորովին չի տրվում:

Այն, ինչ վոր այստեղ մասնավոր յեկամուտի հաշվառման մասին ասվեց, վերաբերվում ե միմիայն աշխատանքի հաշմանդամներին, վորոնք իրենց աշխատունակությունը սպառել են հիվանդության կամ ծերության հետևանքով:

Ինչ վերաբերվում ե խեղված—հաշմանդամներին, նրանց մասնավոր աշխատանքի արդյունքները բոլորովին հաշվի չեն առնվում. միայն այն դեպքում են նրանք թոշակից զբարում, յերբ ոգտագործում են ուրիշի վարձու աշխատանքը, կամ պարապում են քիչ թե շատ խոշոր առետրով, ունենալով 2-րդ կարգից քարձր պատճետ (առետր. վկայական):

ՎՈՐ ԳԵԳԲԵՐՈՒԽՄ Ե ԸՊԵՀՈՎՈԳՐԱԿԱՆ
ԳԱՆՉԱՐԿՂԼ ԽՆԱՄՈՒԽՄ ՎԱՐԲԱՑԱԺ ԸՆՏԵ-
ՆԻՔՆԵՐԻՆ

Վերեւում խոսվեց այն մասին, թե ապահովագործական գանձարկղներն ինչպես են ոգնություն ցույց տալիս այն հաշմանդամներին, վորոնք դժբախտությունն են ունեցել կորցնելու իրենց առողջությունն ու աշխատանքի ընդունակությունը:

Այժմ խոսենք նրա մասին, թե ինչպես են ոգնություն հասնում վորբացած ընտանիքներին, վորոնք կորցրել են իրենց կերակրողներին:

Կյանքի խաղաղ պայմաններում շատ ընտանիքներ զանազան պատճառներից կորցնում են իրենց կերակրողներին: Հիվանդությունից, դժբախտ գեղքերից, ծերությունից մեռնում են և բանվորները, և առետրականները, և սպեկուլիանտները, և զյուղացիները, և ինքնուրույն գործի տերերը: Արդյոք ապահովագրական գանձարկղները բոլոր վորբացած ընտանիքներին են ապահովում, առանց ի նկատի ունենալու, թե ինչով են պարապել նրանց կերակրողները վահ, ի հարկե, վոչ բոլորին: Ապահովագրական զանձարկղը միայն այն վորբացած ընտանիքներին ե ապահովում, վորոնց կերակրողները մինչ դժբախտ գեղքը աշխատել են վարձով, այսինքն յեղել են բանվորներ կամ ծառայողներ: Բացի այդ գանձարկղը ապահովում է նաև Աշխատանքի Բորսայի ապահովագրված գործադուրկների և աշխատանքի հաշմանդամների ընտանիքներին: Բոլոր մյուս վորբացած ընտանիքները՝ նախկին առետրականների, մեծ ու փոքր գործատերերի և սրանց նմանների ընտանիքները,

ապահովագրական գանձարկղից ոգնություն չեն կարող ստանալ:

Աշխատավորի ընտանիքը կարող եւ վորբանալ գանձական պատճառներից: Պատահում են դեպքեր, յերբ կերակրողը բոլորովին վողջ առողջ ե, մինչդեռ ընանիքը զրկված ե նրանից:

Հաճախ պատահում ե, վոր աշխատավորը վորեւ պատճառով, նույնիսկ յերկար տարիներ միասին ապրելուց հետո, թողնում ու հեռանում ե ընտանիքից, տեղափոխվում ե ուրիշ բնակարան և չի ուզում ձանաչել իր ընտանիքը:

Արդյոք ապահովագրական գանձարկղը վորեւ ոգնություն ցույց ետալիս այնպիսի վորբացած ընանիքին: Վհչ, չի ցույց տալիս, վորովհետեւ նման դեպքերում այդ ընտանիքները ունեն ուրիշ յելք, ու ժողովրդական նատարանն ե, վորին պետք ե դիմել: Յեթե այդպիսի ընտանիքը բողոքելով իր կերակրողի այդ վարմունքի գեմ կդիմի ժողովրդական նատարանին, վերջինս կստիպի նրան իր միջոցների վորոշ մասը հաստկացնել ընտանիքի, ապրուստի համար, և դրանով նրանք հեշտությամբ կարող են առանց գանձարկղի ոգնության կառավարվել: Ապահովագրական գարձարկղը ոգնում ե միայն այն ընտանիքներին, վորոնց կերակրողները մահացել են, ուստի նրանք բացի գանձարկղից, վոչ վոքի վրա չեն կարող հույս դնել:

Կերակրողից զրկվել, ու չի նշանակում, վոր նա ապայիման մեռել ե: Պատահում են դեպքեր, վոր նա տնից ճանապահնում ե վորեւ տեղ և ել չի վերադառնում: Յերկար ժամանակ վոչ մի տեղեկություն չի լինում. ուր ե չքացել կամ ինչ և պատահել նրանք—վոչ վոք տեղյակ չե: Մի խոսքով անհայտ կորել

ե: Այդպիսի դեպքերում կերակրողը համարվում ե կորած, Բայց և այնպես այդ ընտանիքը վորպեսզի իրավունք ունենա ապահովագրական գանձարկղից կամ Սոցապից ոգնություն ստանալ պետք ե ձեռք բերի հատուկ փաստաթուղթ, վորով հաստատվի, վոր իսկապես ընտանիքի կերակրողը անհայտ բացակայում ե:

Այդ փաստաթուղթը ստանալու համար պետք ե դիմում տալ ժողովրդական նատարանին, վորը միջոցներ ե ձեռք առնում, անհայտ բացակայողին փնտրելու: Յեթե մի ամսից հետո դատարանը չի ստանում հավաստի տեղեկություն թե վերտեղ ե գոտիում կորածը, դատական ժողով ե նշանակում նրան անհայտացած համարելու համար:

Ժողովում հրավիրվում են վկաներ, վորոնք կերակրողի անհայտ բացակայելը կարող են հաստատել դրանով դատարանը վորոշում ե հանում, վոր ընտանիքի կերակրողը համարվում ե բացակա:

ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴԱՐՄՆԵՐԻՑ ՈՎՔԵՐ ԵՆ ԱՊԵ- ՀՈՎԱՅՈՒՄ

Պետք ե իմանալ, վոր ապահովագրական գանձարկղը իրենց կերակրողին կորցնելուց հետո վորբացած ընտանիքի բոլոր անդամներին ել չի ապահովում: Այդ իրավունքն ունին, 1) անչափահաս յերերեխաները (16 տ. ցած), 2) անչափահաս քույրերն ու յեղբայրները (16 տ. ցած), վորոնք ուրիշ վոչ մի խընամոլ չունեն, 3) հայրը, մայրը և ամուսինը—յեթե անաշխատունակ են, (այդպիսին համարվում են նըրանք, վորոնց եքապերտ հանձնաժողովը նշանակում ե հաշմանդամության առաջին յերեք խմբերից վորեւ

մեկում), կամ ունին ութ տարեկանից փոքր յերեխաւներ:

Վորբացած ընտանիքի անդամները իրավունք ունեն ապահովման այն ժամանակ, յեթե մինչև իրենց կերակրողին կորցնելը նրա խնամքի տակ են գտնվել և դրանից հետո աձլուստի անհրաժեշտ միջոցներից զուրկ են մնացել: Դրանց համար ապրուսի բավարար միջոցները համարվում են նույնը, ինչ վոր տրվում է դառնաղան կարգի հաշմանդամներին:

ԽՆՉՊԵՍ ԵՆ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ ԻԹԵՆՑ ԿԵՐԱԿՐՈՂ- ՆԵՐԻՑ ԶՐԿՎԱԾ ԸՇԽԱՏՎՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ- ՆԵՐԸ

Խնչպես աշխատանքի հաշմանդամները, նույնպես և իրենց կերակրողներին կորցրած աշխատավորների ընտանիքները ապահովվում են գլխավորապես թոշակով: Սրանց թոշակի չափը կախված է ընտանիքի անդամների քանակից, Այն վորբացած ընտանիքները, վորոնց անդամների թիվը շատ ե, շատ ել թողակ են ստանում, իսկ թվով քիչ ընտանիքի անդամները, քիչ թոշակ են ստանում: Վորբացած ընտանիքներն ըստ իրենց անդամների քանակի, բաժանվում են 3 կարգի: առաջին կարգին են պատկանում յերեք և ավելի անդամ ունեցողները, յերկրորդ կարգին՝ յերկու անդամ ունեցողները և յերրորդ կարգին՝ մեկ անդամ ունեցող ընտանիքները:

Առաջին կարգի այն ընտանիքներին, վորոնք իրենց կերակրողներին կորցրել են հիվանդության կամ ծիրության հետևանքով, նշանակվում ե թոշակ 1-ին խմբի աշխատանքի հաշմանդամի լրիվ [թոշակի, այ-

սինքն 14—18 ոռորդու 2/3 մասի չափ, վոր անում և մինչև 12 ոռորդի: Յերկրորդ կարգի ընտանիքներին 1-ին խմբի աշխատանքի հաշմանդամի թոշակի կեսը, վոր անում ե 7—9 ոռորդի: Յերրորդ կարգի ընտանիքներին՝ 1-ին խմբի հաշմանդամի թոշակի 1/3 մասի չափ, վոր անում ե 4 ո. 70 կ.—6 ոռորդի:

Բայց և այնպես, այստեղ ևս պետք է խոստովանվել, վոր այս թոշակի չափը բավարար չե և միենույն ժամանակ հնարավորություն չունենալով առանց բացառության բոլորի թոշակը մեծացնել Խորհրդային իշխանությունն ավելի բարձր թոշակ ե սահմանել այն ընտանիքների համար, վորոնց կերակրողները մահացել են իրենց վարձու աշխատանքի հետ կապ ունեցող գործի ժամանակի: Այդ ընտանիքները, ինչպես և խեղված հաշմանդամները, թոշակ են ստանում իրենց մահացած կերակրողի միջին աշխատավարձի համեմատ:

Բայց վորովհետև այդ ընտանիքներից շատերի կերակրողները մահացել են շատ տարիներ առաջ և այժմ վորոշել նրանց աշխատավարձը անհնարին ե, դրա համար ել այդ ընտանիքները բաժանվում են յերկու կարգի:

Առաջին կարգի մեջ մտնում են այն ընտանիքները, վորոնք իրենց կերակրողներին կորցրել մինչև 1924 թ. հունվարի 1-ը: Սրանց համար, ինչպես և խեղված-հաշմանդամներին, թոշակ ե նշանակվում նույն վորակի ու նույն պրոֆմիության բանվորի աշխատավարձի համեմատ, ինչպիսին մահացած աշխատավորինն ե յեղել:

Յերկրորդ կարգի մեջ մտնում են այն ընտանիքները, վորոնք իրենց կերակրողներին կորցրել են 1924

թվի հունվարի 1-ից հետու Նրանց, ինչպես և 2-րդ կարգի խեղված-հաշմանդամներին, թոշակ և նշանակվում մահացածի վերջին 3 ամսվա միջին աշխատավարձի չափով:

Այսպիսով ստացվում է հետևյալը. յենթադրենք գործարանում աշխատող մի բանվոր մահացել է մինչեւ 1924 թ. հունվարի մեկը. Նրա ընտանիքին թոշակ և նշանակվում նույն վարակի բանվորի միջին աշխատավարձի $\frac{3}{4}$ -ի չափ՝ յեթե ընտանիքի անդամների թիվը յերեք ե կամ ավելի. նույն միջին աշխատավարձի կիսի չափ՝ յեթե անդամների թիվը յերկու յեւ $\frac{1}{3}$ չափ՝ յեթե ընտանիքը բաղկացած ե մեկ անդամից:

Իսկ յեթե գործարանում աշխատող բանվորը մահացել է 1924 թ. հունվարի մեկից հետո, նրա ընտանիքը թոշակ և ստանում իր մահանածի վերջին 3 ամսվա միջին աշխատավարձի $\frac{3}{4}$ մասը, կեսը կամ $\frac{1}{3}$ մասը (համաձայն ընտանիքի անդամների թվի):

Յեթե կերակրողի մահվանից հետո ընտանիքի անդամը մնում ե անողնական, մենակ ու անխնամ. նա յեթե ցանկանում ե, կարող ե տեղափորվել Սոցապի հաշմանդամների տանը. Այս դեպքում նրան, ինչպես և հաշմանդամների տանը տեղափորված բոլոր աշխատանքի հաշմանդամներին, թոշակ այլև չի տրվում:

Նմանապես և ընտանիքի փորբացած անդամը յեթե ապահովագրական գանձարկի ինսամքի տակ ե գտնվում, կարող ե տեղափորվել սոցապի տեխնիկումում կամ կրթական-պրոֆեսիոնալ արհեստանոցում, վորմե զրադմունք սովորելու համար:

Ընտանիքի անչափահաս անդամներին կարելի յետեղավորել զանազան մանկատներում, դպրոցներում և այլն:

ՄԻՒԶԵՎ ՅԵՐԻ Ե ՏՐՎՈՒՄ ԹԱՇԾԿԸ

Հենց դիմումը տալու որվանից, նշանակված թոշակը արվում է մինչև մահը. Այն դեպքում ե դադարեցվում թոշակ տալը, յերբ հաշմանդամի առողջության վիճակն այն աստիճանի յեւ լավանում, վոր նա այլև չի կարող հաշվել հաշմանդամության առաջին 3 խմբի մեջ, այլ մնացած՝ 4-րդ, 5-րդ և 6-րդ խմբերի մեջ, վորոնց արգեն թոշակ չի տրվում:

Աշխատավորի փորբացած ընտանիքի անդամներին թոշակ տրվում է մինչև զանազան ժամանակամիջոցը, անչափահաս յերեխանարին, քույրերին և յեղբայրներին՝ մինչև 16 տ. հասակը. աշխատունակ կը նոյնը՝ յեթե նա ունի իր մոտ փոքրահասակ մանուկներ. մինչև սրանցից ամենափոքրի 8 տարեկան դառնալը. Անաշխատունակ անդամներին տրվում է մինչև մահը կամ մինչև այն ժամանակ, յերբ նա ընդունակ և դառնում աշխատանքի:

Ինչպես հաշմանդամներին, փորբացած ընտանիքներին նույնպես նշանակված թոշակը տրվում է դիմում տալու որվանից:

Աշխատանքի հաշմանդամներին և իրենց կերակրողին կորցրած աշխատավորների ընտանիքներին թոշակ տալը դադարեցվում է այն ժամանակ, յերբ նրանց ապրուստի միջոցները լավանում են այն աստիճան, վոր նրանք հնարավորություն են ստանում ապրելու առանց պետության ոգնության:

Յեթե թոշակ ստացողը անաշխատունակ և համարվում այն պատճառով, վոր յերեխանարին խնամելով ե զբաղված (մինչև նրանց 8 տարեկան դառնալը), յերբ նա նորից ե ամուսնանում, զրկվում է թոշակից, թեկուղ յերեխան 8 տ. լրացրած ընի:

Յեթե թոշակառուն (թոշակ ստացողը), աշխատանքի հաշմանդամը, կամ վորբացած ընտանիքի անդամը ճանապարհվում և արտասահման (մեր յերկրից դուրս), նրա 3 ամսվա թոշակն առաջուց և տրվում։ Յեթե նա ճանապարհվելուց հետո 6 ամսվա ընթացքում վերադառնում ե, ստանում ե նաև չստացած ամիսների համար, իսկ յեթե վերադառնում ե 6 ամսից հետո, թոշակն ել այդ որվանից և տրվում։

Յեթե արտասահմանում նա մնում և 3 տարուց ավելի և հետո վերադառնում, թոշակից բոլորովին զրկվում ե: Այս իհարկե, չի նշանակում, թե պետությունը վորեն բանով դեմ ե, վոր այս կամ այն քաղաքացին արտասահման մեկնի: Վաչ, բայց քանի վոր թոշակառուն հնարավորություն և ունեցել արտասահման գնալու և այնտեղ 3 տարուց ավելի ապրելու, նշանակում ե, նա կարող է մնալ առանց պետության ոգնության, իսկ յեթե այդպես ե, ավելի լավ և այդ գումարն այնպիսի թոշակառուների վրա գործադրել վորոնք ավելի կարիք են զգում։

Բայց հասկանալի յե, վոր հարգելի դեպքերում, որինակ, թոշակառուն արտասահմանում վորեն մեկի ոգնությամբ բժշկվել ե և այն, ապահովագրական մարմինը այդպիսի թոշակառուին դարձյալ շարունակի ոգնություն ցույց տալ։

Ի՞ՆՉՓԵՍ Ե ՆՇԱՆԱԿՎՈՒՄ ԹՈՇԱԿԻ

Աշխատանքի հաշմանդամներին և իրենց կերակրողներին կորցրած աշխատավորների ընտանիքների համար թոշակ կամ այլ անսակ ապահովությունն նշանակում են Սոցապ Վարչության կամ նահանգական

ապահովագրական գանձարկղներին կից հատուկ հանձնաժողովները։ Յերկաթուղայինների և ծովային հաղորդակցության աշխատավորների համար՝ յերկաթուղային կամ ծովային շրջանային գանձարկղների կոմիտեները։

Յեթե մեկը հաշմանդամ և դառնում կամ իր խընամողին կորցնում, ապահովագրական գարձարկղից ոգնություն ստանալու համար պետք և դիմում տա այն գանձարկղին, վորի շրջանում ինքն և ապրում։ Դիմումը կարելի յե ներկայացնել ուղղակի գանձարկղի հանձնաժողովին կամ կոմիտեյին։

Աշխատանքի հաշմանդամներն իրենց դիմումը պետք և տան 2 տարուց վոչ ուշ, այն որվանից հաշված, յերբ անշխատունակության հետեւանքով դադարել են աշխատելուց։ Իրենց կերակրողներին կորցրած ընտանիքները պետք և դիմում տան 2 տարուց վոչ ուշ, հաշված այն որից, յերբ մեռել ե կերակրողը, կամ անհայտ կորեկ՝ համաձայն Ժողովրդական դատարանի վորոշման։

Յեթե մինչև դիմում տալն արդեն անցել ե 2 տարի և ուշացրել են առանց հարգելի պատճառի, դիմումը մերժվում ե։

Աշխատանքի հաշմանդամն իրեն թոշակ նշանակելու համար դիմում տալիս պետք և ներկայացնի հետեւյալ փաստաթղթերը։

1) Վկայական իր մինչև աշխատունակության կորցնելը կատարած վարձու աշխատանքի մասին՝ տրված գործարանից, հիմնարկությունից կամ հակառակ գեղքում, Ժողովրդական Դատարանից։

2) Վկայական անաշխատունակության մասին՝ տրված այն բուժական հիմնարկից, վորտեղ բուժվել ե

հաշմանդամը, կամ այլ փաստաթուղթ—վորով հաստատի նրա հաշմանդամության նշանները:

3) Վկայական հաշմանդամի կարողության ու միջոցների վիճակի մասին՝ տրված պրոֆմիությունից, միլիցիայից կամ բնակարանային վարչությունից:

Խեղված հաշմանդամները բացի այս բոլորց պետք են ներկայացնեն իրենց հետ պատահած դժբախտ գեղքի փաստաթուղթը, մատնանշված վրաեղ և ինչպիսի հանգամանքներում են տեղի ունեցել խեղությունը:

Այն ընտանիքները, վորոնք զրկվել են իրենց կերակրողներից, դիմումի հետ պետք են ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1) Վկայական մեռածի կամ անհայտ կորածի ծառայության վերջին տեղում կատարած աշխատանքի մասին՝ արված գործարանից կամ պրոֆմիությունից:

2) Վկայական իրենց կերակրողի մասին՝ ցույց տալով մահվան պատճառները, տեղն ու ժամանակը, իսկ յեթե անհետ են կորել ժողովրդական դատարանի այդ մասին կայացրած վորոշումը:

3) Վկայական ընտանիքի անդամների թվի մասին՝ ցույց տալով յերեխաների տարիքը և ընտանիքի մյուս անդամների անշշխատունակությունը հաստատող փաստաթղթերը: Յեթե ընտանիքի անշշխատունակ անդամները չունեն այդ փաստաթղթերը, պետք են կցել վկայական նրանց հիվանդության մասին և խնդրել, վոր ապահովագրական գանձարկողը նրանց ուղարկի եքսպերտ հանձնաժողովում վորոշելու, հաշմանդամության վեր խմբին են պատկանում նրանք:

4) Վկայական, վոր դիմողներն իսկապես գտնը-վել են մեռածի կամ անհետ կորածի խնամքի տակ՝

արված պրոֆմիությունից կամ բնակարանային վարչությունից:

5) Վկայական, դիմողների ապրուստի միջոցների մասին՝ արված պրոֆմիությունից, բնակարանային վարչությունից կամ միլիցիայից:

Յեթե ընտանիքի կերակրողը մեռել ե դժբախտ գեղքից իր վարձու աշխատանքի հետ կապ ունեցող գործի ժամանակ, պետք են ներկայացնի վկայական այդ գեղքի մասին՝ ցույց տալով վհրտեղ, յե՞րբ և ինչ հանգամանքներում ե ընտանիքի կերակրողը մահացել:

Ապահովագրական գանձարկողն այս փաստաթղթերով դիմումը ստանալով, իսկայն աշխատանքի հաշմանդամին կամ իրենց կերակրողին կորցրած ընտանիքի մեծահասակ անդամներին ուղարկում ե եքսպերտ հանձնաժողովում վորոշելու՝ հաշմանդամության վոր խմբին են պատկանում նրանք: Յեթե համաձայն եքսպերտ հանձնաժողովից ստացված վկայության փաստաթղթերի դիմողը նշանակվել ե հաշմանդամության առաջին 3 խմբերից վորեն մեկում, ապահովագրական գանձարկը նշանակում ե նրան թոշակ, փաստաթղթերը ուղարկելով հանձնաժողովին կամ ճանապարհների հաղորդակցության ապահովագրական գանձարկի կոմիտեին: Յեթե վորբացած ընտանիքում կան նաև փոքրահասակ յերեխաներ, ապահովագրական գանձարկը փաստաթղթերը միշտ ել հետ և ուղարկում հանձնաժողովին, թեկուղ ընտանիքի մեծ անդամները հաշմանդամության առաջին 3 խմբերից վորեն մեկում նշանակված ել լինին:

Ստացված փաստաթղթերի հիման վրա հանձնաժողովը կամ կոմիտեն քննում են գործը: Յեթե դիմողի ապրուստի միջոցների մասին կասկած ե առաջանում, հանձնաժողովը պահանջում ե գանձարկողին քըն-

նություն կատարել: Յեթե կասկածում ե, վոր հաշմանդամության աստիճանը ձիշտ չե վորոշված, այդ գեպքում հանձնաժողովն իր հաշվով կանչում ե դիմողին, նորից քննության յենթարկելու: Յեթե արգեն հանձնաժողովի կամ կոմիտեյի կողմից այլևս վոչ մի կասկած չկա, նրանց նշանակում ե թոշակ և գանձարկղից տրվում համապատասխան գրքույկ: Յեթե մեկը ուղարկվում ե հաշմանդամների տուն կամ վորեն նման հիմնարկություն, նրան արվում ե ճանապարհելու հնարավորություն:

ԵԵԹԵ ԹՈՂԵԱԿ ՆՇԱՆԱԿՈՎ ՀԱՆՉԱԺՈՂՈՎԸ ՄԽԱԼ ՎՈՐՈՇՈԽՄ Ե ԿԻՑԱՅՐԵԼ՝ ՈՒՄ ՊԵՏՔ Ե ԲՈՂՈՔԵԼ

Յեթե աշխատանքի հաշմանդամները կամ վորբացած ընտանիքները դժգոհ են ապահովագրության մասին հանձնաժողովի կամ ճանապարհների հաղորդակցության ապահովագրական գանձարկղի կոմիտեյի կայացրած վորոշումից, կարող են բողոքել Աշխատանդի ժողովրդական կոմիսարիատի սոցիալական ապահովագրության գլխավոր վարչության կից թոշակներ նշանակող կենտրոնական կոնֆլիկտային հանձնաժողովին:

Բողոքը սկզբում պետք է ուղղել նահանգական Սոցագարչությանը, վորն իր յեզրակացության հետ բոլոր փաստաթղթերով ուղարկում ե հիշված կենտրոնական կոնֆլիկտային հանձնաժողովին: Բողոքն ուղղակի կենտրոնական հանձնաժողովին ներկայացնելն ավելորդ ե, վորովհետեւ նա առանց բոլոր փաստաթղթերի և նահանգական Սոցագարչության այդ մասին ունեցած կարծիքի, չի քննի այդ գործը: Կենտրոնական կոնֆլիկտային հանձնաժողովը յեթե իրավացի յե գտնում բողոքը, փոխում ե նահան-

գական հանձնաժողովի վորոշումը: Յեթե ընդհակառակը գտնում ե, վոր բողոքն անհիմն ե, հաստատում է նահանգական հանձնաժողովի վորոշումը: Կենտրոնական հանձնաժողովի վորոշումը վերջնական ե հանրարկում: ուստի դատարանի, դատախազի կամ պետական վորեն այլ մարմնի միջոցով նորից բողոքելը, իրար չունի:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՍՏԱՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՎԸ ԹՈՂԵԱԿ

Ամեն մի հաշմանդամին և վորբացած ընտանիքին թողակ նշանակելիս հանձնավում ե թողակի գըրքույկ:

Դրքույկը տրվում ե մեկ տարով և բաղկացած ե 12 պոկվող չեկերից (տարվա ամիսների թվով): Զեկի առաջին յերեսի վրա ապահովագրական գանձարկղը հատկացրած թողակի հաշիվն ե պահում, հակառակ յերեսի վրա գրվում ե թողակառվի ապրուստի և ընտանեկան դրության մասին տեղեկություններ պրոֆմիության, միլիցիայի կամ բնակարանային վարչության կողմից, վորոնք և նշանակում են այդ մասին կատարված բոլոր փոփոխությունները:

Ապահովագրական գանձարկղի նշանակված ժողականակներին թողակառուն դիմում և գանձարկղին ներկայացնելով իր գրքույկը, թողակ ստանալու համար:

Այստեղ ծանոթանալով չեկի հակառակ յերեսի վրա պրոֆմիության, միլիցիայի կամ բնակարանային վարչության տված տեղեկությունների հետ, հաշվում են նրան համեմիք գումարը և տալիս իրեն, վորից հետո

թոշակառուն չեկը ներկայացնում ե գանձապահին և ստանում իր զրամը։ Ապահովագրական գանձարկղն իրավունք չունի վորեւ այլ նպատակով թոշակից վորեւ մաս հետ պահել կամ պակաս տալ։ Յեթե թոշակառուն տեղափոխվում ե ուրիշ բնակավայր, պետք և այդ մասին հայտնի գանձարկղին, վորը հետ և վերցնում նրանից թոշակի գրքույկը և փոխարենը տալիս ժամանակավոր վկայական։ Հետ ստացած գրքույկը ուղարկում ե այն պահովագրական գանձարկղին, վորի գործողության շրջանում ապրելու յե թոշակառուն այստեղ նա ներկայացնում ե ժամանակավորապես տրված վկայականը և ստանում իր գրքույկը։ Յեթե այդ տեղափոխությունն անհրաժեշտ պատճառով ե կատարվում, թոշակառուն ստանում ե վկայական, վորով ճանապարհածախսի $25^{\circ}/\text{o}-ը$ գեղջվում ե։

ԻՆՉՊԻՍԻ ԼՐԱՑՈՒՅԻՉԻՉ ՆՊԸԾՑՆԵՐԻ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՅԵՎ ՎՈՐ- ԲԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Բացի այն ոգնությունից, վորի մասին խոսվեց մինչև հիմա, աշխատանքի հաշմանդամները և իրենց կերպողին կորցրած ընտանիքներին իրավունք ունին ստանալու նաև այլ գանազան նպաստներ և արտոնություններ։

Յեթե նրանք գտնվելով ապահովագրական գանձարկի խնամքի տակ, ունենում են նոր յերեխա, գանձարկը տալիս է միանվագ (միանգամից) նպաստ, մանկան համար գնելու անհրաժեշտ իրեր, բացի այդ մանկան սննդի համար տրվում ե ամսական նպաստ, 9 ամսվա ընթացքում։

Միանվագ նպաստ տրվում ե 14—18 ուռբլի, աննդի նպաստ՝ իրեն հատկացված ամսական նպաստի $1/4$ -ի չափ, յուրաքանչյուր ամսվա համար։

Աշխատանքի հաշմանդամի կամ նրա ընտանիքի անդամի մահվան դեպքում, նույնպես և գանձարկղի խնամքի տակ գտնվող ընտանիքների անդամներից վորեւ մեկի մահվան դեպքում տրվում է միանվագ նպաստ 14—18 ուռբլի նրանց այն բարեկամներին, վորոնք թաղման ծախքերն են կատարել։

Նոր ծնվող մանկան միանվագ նպաստ գանձարկլը տալիս է ծննդից մոտ մեկ ամիս առաջ, վորը ստանալու համար անհրաժեշտ և ներկայացնել դանձարկղին կից բժշկական վերստուգիչ հանձնաժողովի վկայականը այն մասին, թե յերբ և յենթարկվում ծնունդը։ Սննդի նպաստ ստանալու համար ամեն անգամ պետք է բնակարանային վարչությունից ներկայացնել վկայական, մանկան վողջ լինելու մասին։

Թաղման նպաստը ստանալիս անհրաժեշտ և ներկայացնել փաստաթուղթ մահվան մասին, յեթե հաշմանդամի ընտանիքի անդամն է մեռել, վկայական՝ վոր մեռնողը նրա խնամքի տակ է յեղել։

Ըստհանրապես այս կամ այն նպաստի համար գանձարկղին դիմելիս, պետք է միշտ մոտն ունենալ թոշակի գրքույկը կամ այլ փաստաթուղթ՝ վոր դիմողը գանձարկղի խնամքի տակ է գտնվում։

ԻՆՉՊԵՍ Ե ԲԺՇԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏՐՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՅԵՎ ՎՈՐԲԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Բոլոր աշխատանքի հաշմանդամներն ու վորքացած ընտանիքները, վորոնք ապահովագրական գան-

ձարկղի խնամքի տակ են գտնվում, հիվանդության գեղագում կարող են ստանալ ձրիարար բժշկական ոգնություն և դեղորայք, ինչպես զանձարկղի ապահովագրված բոլոր բանվորներն ու ծառայողները: Բժշկական ոգնության համար պետք է դիմել առողջապահական բաժնի բուժարանին (Առաժնի): Զրի դեղորայք պետք ե ստանալ բուժարանի բժշկի դեղատոմով՝ այն դեղատնից, զոր ցույց կտա բժիշկը: Ամեն անգամ բուժարանին (ամբուլատորիա) դիմելիս պետք ե ներկայացնել թոշակի զրբույկը կամ այլ փաստաթուղթ, զոր դիմողը ապահովագրական զանձարկղի խնամքի տակ և գտնվում: Մահճակալային բուժումը, այսինքն հիվանդանոցում բուժվելը և բուլոր տեսակի հատուկ բուժումները (ջրով, ելեքարականությամբ և այլն) կտարվում ե Առաժնի շրջանային բուժարանի միջոցով:

Քիչ չե պատահում նաև այնպես, զոր աշխատունակությունը կորցրած հաշմանդամը մասամբ կամ լըրիկ կերպով ընդունակ ե գառնում աշխատանքի, յերբ նրա մարմնի կորցրած բնական գործարանը փոխարինվում ե արհեստականով-պրոտեզով: Որինակ գարրինը զրկվելով վոտքից, չի կարողանում այլևս կտարել իր աշխատանքը, բայց յերբ նրան արհեստական (շինված) վոտք են հարմարեցնում, հնարավորություն և ստանում շարունակելու իր նախկին զբաղմունքը: Ներկայումս ինչպես պետական, նույնպես և մասնավոր գործարաններում պատրաստվում են պրոտեզներ, վորոնք կարելի յե ձեռք բերել դրամով կամ ձրիարար: Ապահովագրական զանձարկղի խնամքի տակ գտնվող բոլոր աշխատանքի հաշմանդամներն ու վորրացած ընտանիքներն իրավունք ունեն պրոտեզներ ստանալ ձրիարար:

Բայց զորովհետեւ պրոտեզները շատ թանկ են նաևում, իսկ դրանց պատրաստելու միջոցները սուր են, աշխատանքի հաշմանդամներն ու վորրացած ընտանիքներին արվում ե ներթական կարգով: Դրա համար 3 հերթ գոյություն ունի: Առաջին հերթին պրոտենց արվում ե բարձր վորակի աշխատավորներին (խոշոր մասնագիտություն և հմտություն ունեցողներին): Յերկրորդ հերթին արվում ե այն աշխատանքի հաշմանդամներին, վորոնք այդ պրոտեզով կարող են կտարել վորակով ցած այլ աշխատանք: Յերրորդ հերթին արվում ե վորրացած ընտանիքներին: Հերթից բուլորովին գուրս պրոտեզներ ստանում են նրանք, վորոնց առողջության տեսակետից շտապ կերպով անհրաժեշտ ե այդ:

Պրոտեզ ստանալու համար ամենից առաջ պետք է դիմել եքսպերտ հանձնաժողովին, վորը վորոշում ե, ինչպիսի պրոտեզ կամ ապարատ ե հարեւագոր և, նրա այդ պակասությունը վորքան շտապ կերպով և պահանջում այդ: Դրանից հետո քննության հետևանքի մասին եքսպերտ հանձնաժողովից ստացած փաստաթուղթը, նրա վորակը (մասնագիտությունը, հըմատությունը) հաստատող վկայականի և զանձարկղից արված փաստաթղթի հետ (վոր նա գանձարկղի խնամքի տակ և) միասին պետք ե ներկայացնել նահանդական Առաժնին կից: բանվորակոնֆլիկտային հանձնաժողովին: Այս հանձնաժողովն արդեն վորոշում և պրոտեզ ստանալու հերթը և համաձայն դրան պատ-

վիրում հաշմանդամի բնակության տեղին ամենամուտ գործարանում:

ԻՆՉՊԻՄԻ ՌՐԾՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՏՐՎԱԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՈՒ ՎՈՐ- ԲԱՑԱԾ ԸՆՏԵՆԻՔՆԵՐԻՆ

Բացի մինչև այժմ հիշված այն բոլոր գլխավոր ոգնություններից, վոր ցույց են տալիս ապահովագրական գանձարկղներն աշխատանքի հաշմանդամներին ու վորբացած ընտանիքներին, նրանց արվում են նաև մի շաբթ այլ արտօնություններ: Սրանցից ամենակարևորն ե արհեստավորական տուրքից հաշմանդամներին ազատելը: Այսպես, Սոցապի կազմակերպած հաշմանդամների արտադրողական արտելներն ազատվում են այդ տուրքից, յեթե գլխավորապես իրենք, հաշմանդամներն են այդ գործը տանում: Այստեղ տողջներին թույլատրվում ե միայն նրանանգիների պարտականություններ կատարել, նաև վարել այնպիսի պաշտոններ, վորոնք հաշմանդամների ուժերից վեր են: Բացի այդ վոչ հաշմանդամներն արտելի անդամների թվի կիսից շատ չպետք ե լինեն: Արհեստավորական տուրքից ազատվում են նաև Սոցապի կազմակերպած հաշմանդամների առեւտրական ձեռնարկությունները, վորոնց աշխատանքներն իրենք հաշմանդամներն են տանում: Արհեստավորական տուրքից ազատվում են նույնպես արհեստավոր հաշմանդամները, յեթե նրանք իրավունք ունին Սոցապի կամ գանձարկղի խնամքի տակ գտնվելու, և այն առանձին հաշմանդամները, վորոնք պարապում են առեւտրով, ունենալով 1 և 11 կարգի պատճեն:

Այդ տուրքից ազատվելու համար պետք է դիմել ֆինանսական տեսչին և ստանալ ձրի պատեհաւ:

Բացի այդ, աշխատանքի հաշմանդամների և վորբացած ընտանիքների հիմնարկներին ուղղած թոշակի, նպաստի և բժշկական ոգնության վերաբերյալ բոլոր գրությունները (զիմում, բողոք, միջնորդություն, հավատարմագիր) ազատ են գրասենյակային և դրոշմանիշների հասույթի վճարումներից (գերբովից սրոր). Ինչպես և այն վճարումներից, վոր կատարվում են ծննդի, մահվան, ամուսնության և այլ փաստաթղթեր ստանալիս՝ յեթե դրանք ապահովագրական գանձարկղին ներկայացնելու համար են:

ՊԱՏճԱՌԻՑ ՎՆԱՍԻ ՀԱՇՄԱՆ ՑԵՐԲ ՑԵՎ ՈՒՄՆԻՑ Ե ՎԱՐՉԱՑՏՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՇԱՆՁՎՈՒՄ ԻԱՏԱՐԱՆԻ ՄԻԶԱՑՈՎ

Վորոշ դեպքերում աշխատանքի հաշմանդամներն ու վորբացած ընտանիքներն իրենց հետ պատահած դժբախտության համար կարող են հատուցումն ստանալ վոչ միայն ապահովագրական գանձարկղից, այլ և այն անհատներից, վորոնք պատճառ են յեղել դրան: Հատուցման չտիր վորոշում ե դատարանը, վորն այս դեպքում նկատի յեւնենում ինչ հանգամանքներում ե յեղել այդ, ով ե վաստակողը և ում: Ցեթե նրան վարձողի ձեռնարկության մեջ ե պատահել այդ դժբախտությունը, վորը և նրան ապահովագրել ե, այսինքն վճարում ե, կամ պարտավոր ե վճարել իր մոտ աշխատողի ապահովագրական մուծումները (գըրամը), նա պետք ե վարձատրի տուժողին միայն այն դեպքում, յեթե ինքն և յեղել դժբախտ դեպքի պատճեն:

ճառը: Այս դեպքում, յերբ կողմնակի անձնավորությունն և ֆլաս պատճառել ուրեմն և տուժողի համար ապահովագրական մուծումներ չի կատարում, պարտավոր և պատճառած ֆլասի համար վարձատրել տուժողին, յեթե նույնիսկ ինքն անմիջական կերպով մեղավոր չին այդ բանում:

Վերցնենք այսպիսի որինակ՝ գործարանում աշխատելիս բանվորի ձեռքը կամ վոտքը ընկնում և մեքնեայի տակ: Վորովհետև գործարանի տերը ապահովագրական մուծումներ և վճարում, նա պարտավոր և բավարարել ֆլասված բանվորին միայն այն դեպքում, յեթե ինքը ժամանակին հոգ չե տարել մեքենայի շուրջը պատելու ցանցով՝ աշխատողին վտանգից պաշտպանելու համար: յեթե գործարանի տերը պահպանելով աշխատանքի պաշտպանության համար սահմանված բոլոր կանոնները, հոգ և տարել մեքենայի մոտ անհրաժեշտ ցանկապատ շինելու, պատասխանատու չե բանվորի ստացած խեղվածքի (սախատ) համար: ուրեմն ֆլասվողը պետք և բավարարվի միայն գանձարկից ստացած թոշակով: Մի ուրիշ որինակ, բանվորը փողոցով անցնելիս, ավտոմոբիլը արգելակի (տորմող) փչացած լինելու պատճառով թոշում և նրա վրա: Այս դեպքում վորովհետև ավտոմոբիլի տերը չե նրան ապահովագրողը, պարտավոր և բավարարել բանվորին, չնայած ինքն ուղղակի կերպով մեղավոր չե այդ բանում:

Այժմ տեսնենք աշխատանքի հաշմանդամը կամ վորբացած ընտանիքն իրենց հասած ֆլասի դիմաց ի՞նչ չափով բավարարություն կարող են հուսալ:

Յեթե բանվորը մահացել է կամ դարձել 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամ, վարձատրություն և ստանում իրն հասած ֆլասի դիմաց գանձարկից

տրված նպաստի տարբերության չափով: Որինակը բանվոր Դարբինյանը գործարանում կաթսայի պայտելուց դարձել է 2-րդ խմբի հաշմանդամ և սրա հետեւանքով զրկվել իր աշխատանքից, —վորի միջին ամսականը կազմում է 32 ոռութիւն: Գանձարկից վորպես թոշակ, նա ստանում և յուրաքանչյուր ամիս աշխատավտրձի $\frac{3}{4}$ մասը, այսինքն՝ միայն 24 ոռութիւն: Այսպիսով նա ամսական կորցնում է 8 ոռութիւն, վորը պարտավոր և վճարել նրան գործարանի տերը, վորովհետև նա մեղավոր և կաթսայի պայտելու մեջ: Իսկ յեթե տուժողը համարվում է 4-րդ, 5-րդ կամ 6-րդ խմբի հաշմանդամ, նա վարձատրություն և ստանում իր նախկին և ներկա աշխատավարձի չափով: Որինակ, ամսնք մեր բանվոր Դարբինյանը համարվեց 5-րդ խմբի հաշմանդամ և դրա հետեւանքով նա փոխադրվում է այնպիսի աշխատանքի, վորը վարձատրվում է ամսական վոչ թե 32 ոռութիւն, ինչպես դա առաջ եր, այլ 20 ոռութիւն, ուստի, վորովհետև գործարանի տերը մեղավոր է, վոր կաթսան պայտել ե, Դարբինյանին պարտավոր և վճարել 32 և 20 ոռութիւն միջև յեղած տարբերությունը, այսինքն՝ 12 ոռութիւն միջև յեղած տարբերությունը, այսինքն՝ 12 ոռութիւն, վորպեսզի գումարը նա պակաս և ստանում իր ուստի աշխատավարձից՝ դժբախտ դեպքի հետեւանքով (իսկ ապահովագրական գանձարկը վերջին 3 խմբի հաշմանդամներին նպաստ չի բաց թողնում): Նույն ձևով և բավարարվում տուժողը, յեթե այս գեղգում դժբախտության պատճառը կողմնակի անձնավորությունն է:

Պարզ է ուրեմն, վոր դժբախտության պատճառը յեղողները առաջին 3 խմբերին պատկանող (1-ին, 2-րդ և 3-րդ հաշմ. խմբ.) վարձատրում են նրանց նախկին աշխատավարձի և գանձարկից տրվող թո-

շակի տարբերության չափով, իսկ վերջին 3 խմբերի հաշմանդամներին՝ (4-րդ, 5-րդ և 6-րդ հաշմ. խմբ.) նրանց հին ու նոր աշխատավարձի տարբերությունը: Վորբացած ընտանիքները ստանում են իրենց կերպողի ստացած աշխատավարձի և ապահովագրական գանձարկից տրվող թոշակի տարբերությունը:

Դժբախտության հետևանքով վարձատրություն ստանալու համար, անհրաժեշտ ե դիմում տալ Ժողովրդական Դատարանին կամ նահանգական Դատարանի Աշխատանքային Սեսսիային (գումարված ժողովին): Իսկ մինչև դատարանին դիմելը, վնասված հաշմանդամը կամ վորբացած ընտանիքը պետք է դիմեն ապահովագրական գանձարկին՝ իրենց թոշակ նշանակելու համար:

Յերբ թոշակ վորոշող հանձնաժողովն իր աշխատանքը վերջացնում է, պետք է գանձարկից վկայական վերցնել, վոր նրան այս ինչ խմբի (կամ ընտանիքի այսքան անդամի համար), թոշակ և նշանակված, կամ՝ բոլորովին մերժված և Այս տեղեկությունն անհրաժեշտ ե, վորովինետև դատարանն առանց դրան չի կարող իմանալ, պետք է նրան լրիվ վարձատրություն տալ, թե միայն տարբերությունը և ինչ չափով:

Դատարանով քաղաքացիական պահանջ դնելը բավականին դժվար գործ և և շատ ճեղարկելի յե շփոթվել, վորովինետև պետք է իմանալ՝ ում դիմել, որենքի վեր հողվածը հիմք ընդունել, ինչպիսի վկայականներ ներկայացնել և այն: Ուստի լավ է դատարանին դիմել պրոֆմիության իրավաբանական կոնսուլտացիայի միջոցով: Այսանդ պրոֆմիության իրավաբանը, փաստաբանը, ավելի մանրամասն, քան այդ գրված լինի

վորեւ գրքույկում, կրացատրի՝ ինչպես վարկել և ինչ անել:

Պրոֆմիության այդ իրավաբանական կոնսուլտացիայում խորհուրդներ ու զանազան աջակցությունն ցույց ե տրվում բոլորովին ձրիաբար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

յիրեա

1. Ինչի՞ մասին և խոսվում այս գրքույկում 3
2. Ի՞նչ բան և ապահովագրական գանձարկղը 5
3. Ապահովագրական գանձարկղը ինչպիսի՞ հաշմանդամներին և ապահովում 6
4. Հաշմանդամները քաֆանվում են 6 խմբի 8
5. Ովքե՞ր են վորոշում հաշմանդամության վոր խմբին պատկանելը 9
6. Ո՞ւմ պետք է բողոքեն եքսպերտ հանձնաժողովի վորոշումներից դժբոհները 12
7. Ինչպի՞ս են ապահովում աշխատանքի հաշմանդամներին 13
8. Խեղված-հաշմանդամներն առանձնացված են և հաշվվում են հատուկ կարգի մեջ 14
9. Ելի ինչպի՞ս են ապահովում աշխատանքի հաշմանդամները 19
10. Թոշակառվի ապրուստի միջոցների հաշվառումը 21
11. Վեր գեղքերում և ապահովագրական գանձարկղը խնամում վորբացած ընտանիքներին 23
12. Ըստանիքի անդամներից ովքե՞ր են ապահովում 25
13. Ինչպի՞ս են ապահովվում իրենց կերակրողներից զրկված աշխատավորների ընտանիքները 26

14. Մինչև յԵրբ և տրվում թոշակը 29
 15. Ինչպի՞ս և նշանակվում թոշակը 30
 16. Յեթե թոշակ նշանակող հանձնաժողովը սըլլալ վորոշում և կայացրել՝ ում պետք երազությունը կայացրել 34
 17. Ինչպի՞ս պետք և ստանալ նշանակված թոշակը 35
 18. Ի՞նչպիսի լրացուցիչ նպաստներ են տըրպվում աշխատանքի հաշմանդամներին և վորբացած ընտանիքներին 36
 19. Ինչպի՞ս և բժշկական ոգնություն ցույց տրվում աշխատանքի հաշմանդամներին և վորբացած ընտանիքներին 37
 20. Ի՞նչպիսի արտօնություններ են տրվում աշխատանքի հաշմանդամներին ու վորբացած ընտանիքներին 40
 21. Պատճառած վնասի համար յԵրբ և ումնից և վարձատրություն պահանջվում՝ դատարանի միջոցով 41
-

ՀՀ Ազգային գրադարան



NL0212757

ԳՐԱՆՑՈՒՅԹ

44. 178